

Ա Ր Չ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր գյուղական համայնքի ղեկավարի 2011թվականի 1-ին կիսամյակի հաշվետվությունը՝ կայացած 14.07.2011 թ-ին. ժամը 14.00-ին

Նախագահությամբ՝ Ռ.Սարգսյանի
քարտուղարությամբ՝ Գ.Հովհաննիսյանի
մասնակցությամբ՝ Արմավիրի մարզպետարանի գյուղվարչության պետի պաշտոնակատար Վ.Աբրահամյանի

Արմավիր գյուղական համայնքի հաշվետու զեկուցմանը ներկա են գտնվում համայնքի ավագանու անդամները, համայնքի հիմնարկ-ձեռնարկությունների տնօրենները և աշխատակիցները, ինչպես նաև համայնքի մոտ 40 բնակիչներ:

Լսեցին - Արմավիրի մարզի Արմավիր գյուղական համայնքի ղեկավար՝ Ռ.Սարգսյանի 2011թվականի 1-ին եռամսյակի հաշվետու զեկույցը:

Պարոն Ռ.Սարգսյանը հաշվետու զեկույցում ներկայացրեց 1-ին կիսամյակի ընթացքում կատարած աշխատանքների վերաբերյալ, բյուջեի մուտքային և ծախսային կատարողականը, ինչպես նաև համայնքին վերաբերվող այլ հիմնախնդիրների մասին:


Համայնքի ղեկավար Ռ.Սարգսյանի հաշվետու զեկույցից հետո արտահայտվեց համայնքի բնակիչ՝ Սիրզա Նազարյանը, որը համայնքի ղեկավար Ռ.Սարգսյանին շնորհակալություն հայտնեց համայնքում բարեփոխումներ կատարելու համար, շեշտելով նաև համայնքի առաջնային հիմնախնդիրների առաջիկա տարվա ընթացքում իրականացումը՝ համայնքի ղեկավարի կողմից:

Արտահայտվեցին նաև Գևորգ Կարապետյանը և Իշխան Ազիզյանը, որոնք նշեցին, որ իրոք համայնքում կատարվել է մի շարք բարեփոխումներ, սակայն համայնքը ունի ցավոտ կողմեր, որոնցից է՝ խմելու ջրի ջրագծերի վերափոխումը և մանկապարտեզի վերանորոգումը:

Այնուհետև ելույթ ունեցավ մարզպետարանի գյուղվարչության պետի պաշտոնակատար՝ Վ.Աբրահամյանը: Նա առաջարկեց համայնքի բնակիչներին ակտիվություն ցուցաբերել հողի հարկի վարձավճարների մուծման գործընթացում, որը կնպաստի բյուջեի կատարողականին և կկարողանանք լուծել համայնքի բաց թողնված հիմնախնդիրները:

Գյուղվարչության պետի պաշտոնակատար՝ Վ.Աբրահամյանը համայնքի ղեկավարի 2011 թվականի 1-ին կիսամյակի ներկայացրած հաշվետվությունը գնահատեց դրական:

Համայնքի ղեկավար՝
Քարտուղար՝
Իսկականի հետ ճիշտ է:



Ռ.Ֆ.Սարգսյան
Գ.Ս.Հովհաննիսյան

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր գյուղական համայնքի 2011 թ-ի համայնքի ղեկավարի 1-ին կիսամյակի

1. Գործավարություն.

2011թ-ի 1-ի կիսամյակի ընթացքում համայնքի բնակիչներից ստացվել է 62 գրավոր և բանավոր դիմումներ և առաջարկություններ, որոնք ստացել են իրենց համապատասխան լուծումները: Համայնքի բնակիչներին տրամադրվել են 450 հատ տեղեկանքներ, բնութագրեր: Հղվել են 65 հատ պաշտոնական գրություններ մարզային և ֆեդերալ ենթակայության կառույցների ղեկավարներին: Համայնքի ղեկավարի կողմից արձակվել է 5 կարգադրություն և ընդունվել է 6 որոշում:

2. Ավագանու գործունեություն.

2011 թ-ի 1-ի կիսամյակի ընթացքում համայնքի ավագանին գումարել է 2 հերթական և 4 արտահերթ նիստեր: Ավագանու քննարկմանն են ներկայացվել 8 դիմումներ և ստացել իրենց համապատասխան լուծումները:

3. Գյուղատնտեսության ոլորտ.

Հաշվետու ժամանակահատվածում համայնքի առկա հողատարածքներն ու ցանքերն են. բնակավայրային նշանակության հողեր – 242,9 հա
գյուղ. նշանակության հողատարածք – 417,11 հա, որից
խաղողի այգի – 52,66 հա
պտղատու այգի – 60,75 հա:

Անասնազլխաքանակ.

խոշոր եղջերավոր անասուններ 393 գլուխ, որից կովեր՝ 162
մանր եղջերավոր անասուններ 854 գլուխ ոչխար, որից մայրեր՝ 647, շիշակներ՝ 151
խոզեր՝ 35 գլուխ, որից մայրեր՝ 25
մեղվաընտանիք – 130
թռչուններ – 2016

2. Հողի հարկ և գույքահարկ.

2011 թ-ի 1-ին կիսամյակով համայնքային բյուջեով նախատեսվել է 1300,0 հազ. դրամ հողի հարկ: 01.07.2011թ-ի դրությամբ համայնքի հողօգտագործողներից գանձվել և մուտք է արվել համայնքի բյուջե 1299,6 հազ. դրամ հողի հարկ, որը կազմում է համայնքի 1-ին կիսամյակի հողի հարկի 99,9 % -ը:

Գույքահարկը բյուջեի եկամտային մասով նախատեսվել է 836,0 հազ.դրամ:

01.07.2011 թ-ի կտրվածքով գանձվել և մուտք է արվել համայնքի բյուջե 662,2 հազ դրամ,որը կազմում է գույքահարկի 77,9 %-ը:

2011 թ-ի բյուջեի 1-ին կիսամյակի կտրվածքով նախատեսվել է 1200,0 հազ.դրամ հողի վարձավճար:01.07.2011թ-ի դրությամբ գանձվել և մուտք է արվել համայնքի բյուջե 1195,0 հազ.դրամ,որը կազմում է վարձավճարի 99,5 %-ը: Նախատեսվել է 74,0 հազ.դրամ տեղական տուրք:01.07.2011 թ-ի դրությամբ գանձվել և մուտք է արվել համայնքի բյուջե 73,5 հազ.դրամ, որը կազմում է 99,3% :

2011 թ-ի բյուջեով 1-ին կիսամյակի կտրվածքով պետության կողմից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրվող դոտացիան կազմել է 18313,3հազ.դրամ,որը ֆինանսավորվել է 100 %-ով:

2011 թ-ի բյուջեում սեփական եկամուտները նախատեսվել է 18841,5 հազ.դրամ:

01.07.2011 թ-ի դրությամբ սեփական եկամուտների փաստացի մուտքերը կազմել են 2035,3 հազ.դրամ,որը կազմում է 99,9 %:

Ծախսեր.

Արմավիրի գյուղապետարանը 2011 թվականի 1-ին կիսամյակի կտրվածքով կատարել է հետևյալ ծախսերը:

- 1.Վճարվել է ընթացիկ աշխատավարձ 7160,9 հազ.դրամ
- 2.փոխանցվել է սոց.վճար 1479,3 հազ.դրամ
- 3.կատարվել է գրասենյակային ծախս 140,0 հազ.դրամ
- 4.կատարվել է տրանսպորտային ծախս 299,7հազ.դրամ
- 5.փոխանցվել է էլեկտրոէներգիայի և գազի գումար 2430,8 հազ.դրամ
- 6.մանկապարտեզին սուբսիդիա փոխանցվել է 1585,0 հազ.դրամ
- 7.անապահով ընտանիքների օգնության գումար է վճարվել 1205,0 հազ.դրամ
8. միջոցառումների համար ծախսվել է 2600,0 հազ.դրամ
- 9.տեղեկատվական ծառայություն ձեռք բերելու համար ծախսվել է 108,0 հազ.դրամ
- 10.համակարգչային ծառայություն ձեռք բերելու համար ծախսվել է 135,8 հազ.դրամ
- 11.այլ մեքենաների և սարքավորումների` (ջրի պոմպ)վերանորոգման համար ծախսվել է 500,0 հազ.դրամ
- 12.աղբահանության համար ծախսվել է 229,9հազ.դրամ
- 13.Արվեստի դպրոցի նախորդ տարվա վերանորոգման համար փոխանցվել է 1725,1 հազ.դրամ:

Ազգարնակչություն.

ա/ համայնքի փաստացի բնակչությունը կազմում է 3565 մարդ

2011թ-ի1-ին կիսամյակի ընթացքում Արմավիր համայնքում ծնվել է 20 երեխա,գրանցվել է 8 մահ:

Համայնքում կան 42 նպաստ ստացող ընտանիքներ և 420 թոշակառուներ:

5.Կրթություն և գիտություն.

Համայնքում գործում է մեկ միջնակարգ դպրոց, որտեղ հաճախում են 345 աշակերտ և աշխատում են 46 աշխատող :Մեկ մանկապարտեզ՝2խմբով,որտեղ հաճախում են 50 երեխա և աշխատում 11 աշխատող,մանկապարտեզը գործում է վեց ամսյա ժամկետով:Գործում է մաև Արվեստի դպրոց, 14 աշխատողներով որտեղ հաճախում են 58 երեխա,դպրոցը գործում է ամբողջ տարվա կտրվածքով:

6.Մշակույթ.

Համայնքը ունի մեկ մշակույթի տուն՝ 5 աշխատող,գործող գրադարան՝ 1 աշխատող, և գործում է ազգագրական պարերի խումբ 15 երեխաներով.

7.Առողջապահություն.

Համայնքում գործում է բժշկական անբուլատորիա 11 աշխատակցով.

8. Զինակոչ.

Համայնքի ղեկավարի և աշխատակազմի գործուն անդամները պատշաճ կերպով կազմակերպվել է 2011 թ-ի գարնանային զինակոչը և կատարվել է պլան - առաջադրանքը:

9. Միջոցառումներ և սոցիալական ոլորտ.

Պատշաճ կերպով նշվում են Հայաստանի Հանրապետության պետական տոները և հիշատակի օրերը:Ըստ հարկի նշվում և կազմակերպվում են ,Հայրենական Մեծ պատերազմում տարած հաղթանակի տարելիցը,մարտի 8-ի տոները,կազմակերպվում է այցելություններ զոհված ազատամարտիկների շիրիմներին.


Պարբերաբար իրականացվում է գյուղի փողոցների աղբահանությունը:Անխափան իրականացվում է խմելու ջրի մատակարարումը:

10.ա/Համայնքի հիմնախնդիրներից առաջնային է համարվում մանկապարտեզի շենքի հիմնանորոգումը,որը դեռևս իրականացված չէ:

բ/խմելու ջրի խողովակների հիմնովին վերանորոգումը:

գ/եկեղեցու շինարարությունը:

Արմավիր համայնքի
ղեկավար՝



Ռ.Ֆ.Մարգարյան